

ՀԱՆԴԻՍ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՊԼՏՄԱԿԱՆ. ԵՕԹ-
նեբորդ գիրք: Մոսկուա,
տպ. Բ. Բարխուդարեանի
1896. Էր. 8°. 360+35.

Անցամանայ հանդէսների նախատիպն է մեր
մէջ պ. Մկրտիչ Բարխուդարեանի «գրականական և
պատմական հանդէսը» որից յետոյ քանի մի նման
հրատարակութիւնների են ձեռնարկել զանազան
անձինք: Բայց ոչ մէկն էլ չէ հասել գրական և
պատմական հանդիսի բարձրութեան: Յաւով պիտի
խոստովանենք, որ ցանկալի օժանդակութիւն չը
գտնելով՝ հանդիսի խմբագրութիւնն հետզհետէ ան-
ճշգրտապէս է գտնուել և այս եօթներորդ գիրքը
իւր արտաքինով անգամ ցոյց է տալիս խմբագրու-
թեան անհնարին ճիգերը նիւթական գծարու-
թեանց յաղթելու: Այս գիրքն ևս իւր նախորդների
պէս հարուստ գրական և պատմական բովանդակու-
թիւն ունի, թէպէտ այս համարի բանաստեղծական
ժինն աւելի թոյլ է: Հանդէսն ամփոփում է քսան
յօդուած, որոնց մէջ յիշատակութեան արժանի են
պ. Ե. Շահաղիզի գրած Մ. Նալբանդեանի կենսա-
գրութիւնն և Մ. Բերրերեանի գրական ակնարկնե-
րն: Պ. Շահաղիզը մեծ աշխատասիրութեամբ
հաւաքել ու կարգի է բերել Միքայէլ Նալ-
բանդեանի կենսագրութեան վերաբերեալ նիւ-
թերն, առանձնապէս գնահատելի են պ. Շահաղիզի
անտիպ աղբիւրներն, որոնցից նա օգտուել է հան-
գուցեալ մեծ հրապարակագրի ազգականների և յա-
րեկամների ձեռնտուութեամբ: Նալբանդեանցի
գնահատութիւնն ճիշդ է, թէպէտ և ինչպէս բնա-
կան է: Հեղինակը իւր հերոսի գործերի տպաւորու-
թեան և նորա անձական բարեկամների ազդեցու-
թեան տակն է գտնուում: Ուսումնասիրութեան
թաւալը ընդարձակել է շնորհիւ պ. Շահաղիզի
ընդհանուր (161 էրես) զիտողութիւններ անելու
սովորութեան:

Հանդիսի մշտական աշխատակիցներից Ե. Յով-
հաննեսեանն այս անգամ մասնակցում է մի բանաս-
տեղծութեամբ միայն, որ այնքան ժամանակակից է.

«Դարերով լացիր, ո՞վ մայր հայրենիք.

Եւ արիւնհոս վերքերը քարդ բաց:

Անվերջ տանջանքիդ ահաւոր գաղտնիք

Արցունքն աչքիդ պահում ես ծածկած . . .

Մահամերձ հիւանդ՝ անփառք ապրեցար:

Հալում ես կամաց դու մոմի նրման.

Դու կայծեր տուիր, խորոյկ չունեցար.

Գընում ես գէպի անխաչ գերեզման:

Պ. Յովհաննեսեանի քնարի մեղմ ձայներն
ափսոս որ այնքան քիչ են հնչում:

Առանձին հրճուանօք կարդացուում են վաղամե-
ռիկ Ա. Ասկարեանի բանաստեղծական երկերի մը-
նացորդները, միանգամ ևս ստիպուած ենք գոչելու
«ափսոս տաղանդ»: Եիլլերի պարերգի թարգմանու-
թիւնը մի օրինակելի գործ է:

Թարգմանական մանրամասներն միջակ գրա-
կան երկեր են, այս անգամ հանդէսը սեփա-
կան հայիական միպասուն չունի: Ս. Նազարեա-
նից և Ռ. Պատկանեանից մնացած նշխարներն
պատմական նշանակութիւն ունին, իսկ Աշուղ
— Զ. Իւանուն նուիրած ուսումնասիրութիւնն աշա-
կերտական գործ է աւելի քան գրասիրական:

Գալով «Այլ և այլ քին» պիտի ցաւենք միայն
թէ կատարուած իրողութիւնների և թէ նրանց ար-
տայայտութեան մասին . .

Հանդէսն արգէն իւր որոշ տեղն ունի մեր զը-
րականութեան մէջ, ցանկանում ենք որ նա այդ
տեղը պահպանելով օժանդակութիւն գտնէ ու յա-
րատուէ:

Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ. ԶԷԹԹՈՒՆ, տեղագրական, աղ-
գագրական և վարչական տեսու-
թիւն. Թիֆ. 1896. Տ. Մարտ.
տպարան. (Արտատպած «Մշակ»
լրագրից մի քանի յաւելումնե-
րով). Էր. 92. Գինն է 20 կոպէկ.

Զէյթունի անունը 1860 թուականից մի ա-
ռանձին հրապոյր է ստացել, ուստի և իւրաքանչիւր
քիչ շատ գրագէտ հայ հետաքրքրուում է այդ գա-
ւառակով և նորա քաջ բնակիչներով: Անդեալ տարի
Զէյթունն առանձնապէս հետաքրքրութեան արժա-
նացաւ շնորհիւ իւր բնակիչների տաճիկ հերոսակ-
ներին ցոյց տուած հերոսական բնդգիմութեան:

Պ. Առաքելեանը Զէյթունի մասին ժողովել
է ամենատեսակ տեղեկութիւններ այնպիսի աղբիւր-
ներից, որ մատչելի չեն մեծամասնութեան, նոր բան
չէ տալիս նա մեղ, ոչ իսկ մի նոր բացատրութիւն
չը լուծուած խնդիրների, այսու ամենայնիւ սա մի
օգտակար ժողովրդական ընթերցանութեան գրքոյկ
է, որ գտնէ հեռաւոր ծանօթութիւն է տալիս մեր
հասարակութեան:

Ն. Բ.

